



Մ ՈՒՐԲ ԶԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵՄ ԿԵՂԵՅԻ



ԾՆՆԴԵԱՆ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՕՐ

12 ՅՈՒՆԻՈՒԱՐ 2020

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ	1
Ծանուցումներ	Էջ	2

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՀՌՈՄԷԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ

(1.1-7)

Ես՝ Պօղոս, ծառան եմ Յիսուս Քրիստոսի, որ զիս կանչեց իր առաքեալը ըլլալու եւ պատշօն տուաւ Աստուծոյ աւետարանը քարոզելու: Սուրբ Գիրքերուն մէջ արձանագրուած կը գտնէք, թէ Աստուած կանուխէն իր մարգարէներուն միջոցաւ խոստացաւ տալ այս աւետիսը, որ կը վերաբերի իր Որդիին՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի, որ իբրեւ մարդ Դաւիթի սերունդէն ծնաւ, բայց որ իբրեւ Աստուծոյ Որդի յայտնուեցաւ, երբ իր Սուրբ Հոգիին զօրութեամբ մեռելներէն յարութիւն առաւ: Ան էր որ ինծի առաքեալ ըլլալու շնորհք տուաւ, որպէսզի իր անունին հաւատալու եւ հնազանդելու հրաւիրեմ բոլոր հեթանոսները, որոնց կարգին դուք ալ Յիսուս Քրիստոսի կանչուեցաք:

Ողջո՛յն բոլորիդ որ Հռոմ կը բնակիք՝ ձեզի՝ որ Աստուած սիրեց եւ իր սուրբ ժողովուրդը ըլլալու կանչեց: Թող Աստուած մեր Հայրը եւ Տէր Յիսուս Քրիստոս շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն ձեզի:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ (2.1-11)

Յիսուսի Գալիլիա հասնելուն երրորդ օրը հարսանիք մը կար Կանաքաղաքին մէջ, եւ Յիսուսի մայրը հոն էր: Յիսուս եւ իր աշակերտներն ալ հրաւիրուած էին հարսանիքին:

Երբ գինին պակսեցաւ, Յիսուսի մայրը իրեն ըսաւ. «Գինի չունին»: «Մա՛յր, ինծի այս մասին ըսելու պէտք չունիս», պատասխանեց Յիսուս, «Իմ ժամանակս տակաւին չէ հասած»: Սակայն իր մայրը ըսաւ սպասաւորներուն. «Ինչ որ ըսէ ձեզի, կատարեցէ՛ք»:

Հրեաներու մաքրուելու սովորութեան համաձայն հոն քարէ վեց կարասներ կային, որոնցմէ իւրաքանչիւրը ութսունէն հարիւր լիդր կ'առնէր: Յիսուս ըսաւ սպասաւորներուն. «Կարասները ջուրով լեցուցէք»: Եւ սպասաւորները լեցուցին մինչեւ բերան: Յետոյ ըսաւ անոնց. «Հիմա առէ՛ք եւ մատակարարին տարէք»: Անոնք ալ տարին:

Մատակարարը համտեսեց գինիի փոխուած ջուրը, բայց չգիտցաւ թէ ուրկէ էր. թէեւ սպասաւորները, որոնք ջուրը լեցուցած էին, գիտէին: Այն ատեն մատակարարը փեսային ըսաւ. «Ամէն մարդ նախ ընտիր գինին կը հրամցնէ, իսկ երբ գիննովնան, այն ատեն՝ հասարակը, մինչ դուն ընտիր գինին պահեր ես մինչեւ

հիմա»:

Յիսուս իր այս առաջին հրաշքը կատարեց Գալիլիայի Կանա քաղաքին մէջ: Հոն ան իր փառքը յայտնեց, եւ աշակերտները հաւատացին իրեն:

Ս. ՅԱԿՈՔ

Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի

2020

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԼՍԱՐԱՆ/Բ.

Արամ Ա. Կաթողիկոսի Օծման

25-ամեակին Առիթով

Կը դասախօսէ հովիւը՝

Արժ. Տ. Գառնիկ ԱԼ. Քհնյ. Գոյունեան

2

Շաբաթ, 18 Յունուար 2020-ի

երեկոյեան ժամը 6.00-ին

ՀՈԳԵԻՈՐԸ ԵՒ

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻԻՆԸ

3

Շաբաթ, 25 Յունուար 2020-ի

երեկոյեան ժամը 6.00-ին

ԲԱՐՈՅԱԿԱՆԸ ԵՒ

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻԻՆԸ

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ
ՁԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԵՐԸ
ԱՆԽՕՐՕՔ ԿԱՏԱՐԵՅԷ ԿԱՊՈՒԵԼՈՎ
ԵԿԵՂԵՑՈՅ ԴԻՒԱՆԱՏՈՒՄ:

ՎՅԵԼԵՅԷ՛Ք ԵԿԵՂԵՑՈՅՍ
ԴԻՄԱՏԵՏՐԻ ԷՁՐ
ԵՒ ՁԵՐ ՀԱԻԱՆՈՒԹԻՒՆ ԵՎՍՏԵՅԷ
(like).
www.facebook.com/SourpHagopChurchMontreal

ՎՅԵԼԵՅԷ՛Ք ԱՆԵՒ
Ս. ՅԱԿՈՔ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԱՍ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՑՈՅ ԿԱՔԷՁՐ՝
www.sourphagop.net

ՀԻՒԱՆԴՆԵՐՈՒՄ ԱՅԵԼՈՒԹԻՒՄ
Բարեհաճեցէք հեռաձայնել
Արժ. Տ. Գառնիկ
ԱԼ. Քհնյ. Գոյունեանի.
514 909 5203 քիփն:

ՏՆՕՐՀՆԷՔ
Տնօրհնէք փափաքող ընտանիքները,
թող բարեհաճին դիմել
Տ. Գառնիկ ԱԼ. Քհնյ. Գոյունեանի,
հեռաձայնելով
514 909 5203 քիփն: